



ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

ԽՍԴԸՆԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՄԱԳԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՎԻԵՆՆԱՑԻ ՍԵՄԻՄ

(23—28 նոյեմբերի 1953 թ.)

Նոյեմբերի 23-ին Վիեննայում, «Դրեսերպարկ» շենքում բացվեց Խաղաղության Համաշխարհային Խորհրդի սեսիան, որին, բացի Խաղաղության Համաշխարհային Խորհրդի անդամներից, ներկա էին զանազան երգընից բազմաթիվ հյուրեր։ Սեսիայի նախագահությունում էին Ժողով Կյուրիկին, Ժան Լաֆիտիարը, Մատ Գունը, Իզաբելլա Բլյումը, Էֆենի Կոտտոնը, Պյետրո Նեննին, Իլուո Օյաման, Վալտեր Ֆրիդրիխսը, Իլյա Էրենբուրգը, Նիկոլայ Տիմոնովը և Խաղաղության պաշտպանության միջազգային շարժման ականավոր գործիչներ։ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի նախագահ պրոֆ. Ժողովին խոսքը տվեց Խաղաղության կողմնակիցների Ավստրիական խորհրդի նախագահ Բրանտվայներին, որը ողջունեց սեսիայի մասնակիցներին։

Այսուհետև մեծ ճառով հանդես եկավ պրոֆ. Ժողով Կյուրիկին, որից հետո Խաղաղության Համաշխարհային Խորհրդի քարտուղար Ժան Լաֆիտը Խաղաղության Համաշխարհային Խորհրդի անունից առաջարկեց սեսիայի օրակարգի և հանձնաժողովներ ստեղծելու մասին։

Սեսիան ընդունեց հետևյալ օրակարգը.

1. Այն գործողությունները, որոնք պետք է ձեռնարկեն միջազգային տարածայնությունները և կոնֆլիկտները ամենքի համար

ընդունելի համաձայնությունների միջոցով լուծելու նպատակով (կորհական ու գերմանական պրոգլեմների կարգավորումը, ջրածնային ռումբի և մասսայական ոչնչացման դեմքի բոլոր տեսակների արգելումը, սպառավիճակների կրծատումը և այլն)։

2. Առաջարկի ի պաշտպանություն իւսուզագովայացին համաշխարհային հանդիպում անցկացնելու վերաբերյալ։

Սեսիան որոշում ընդունեց ստեղծել երեք համձնաժողովով.

Փաղաքական, որը կբննարկի օրակարգի առաջին կետին վերաբերող առաջարկները, կազմակերպական, որը կբննարկի օրակարգի երկրորդ կետին վերաբերող առաջարկները, և կուլտուրական հարցերի հանձնաժողով, որը կբննարկի կուլտուրական բնագավառի զանազան միջցառումները, որոնք Խաղաղության Համաշխարհային Խորհրդի կողմից նախատեսված են 1954 թվականի համար։

Նոյեմբերի 24-ի առավոտյան նիստում հանդես եկան Մատ Գունը (ՉժՌ), Խան Սեր Յան (ԿԺԴՌ), Տոկուսարուր Դանը (Յապոնիա), Իլյա Էրենբուրգը (ՍՍՌՄ), Նիստում մտերի փոխանակությանը հանդես եկան Խան Վիլինելմ Էլֆեր (Արևմտյան Գերմանիա), Միններու-Կովլինը (Հուանդիա), Անեմկա Գոդինովա-Սպուտնան (Չիխուալուկիա), Գովինդ Սամայը (Հնդկաստան)։

Երեկոյան նիստում հրապարակվեց պրոֆ. Բեռնալի (Անգիա) ճառը, որը չի կարողացել մասնակցել սեսիայի աշխատանքին: Ապա ելույթ ունեցան պրոֆ. Լեռպոլտ Խեժելդը (Լեհաստան), պրոֆ. Դոբրեստրեգեր (Ավստրիա), Վյահին Մելտտին (Ֆինլանդիա): Նիստում մտքերի փոխանակությանը հանդես եկան նաև Խաղաղության Համաշխարհային Խորհրդի անդամ Իօաքելլա Բլումը (Բելգիա), պրոֆ. Անդրե Բոնեարը (Շվեյցարիա), Ֆլորիկա Մեզինչեսկուն (Ռումինիա), Պետրոս Կոկալիսը (Հունաստան), Մերտելը (Թուրքիա), Անդրեաս Պոլիռուսը (Կիպրոս):

Նոյեմբերի 25-ի առավոտյան նիստում հանդես եկան Խաղաղության Համաշխարհային Խորհրդի անդամ պրոֆ. Նաֆիսին (Իրան), Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի փոխանախագահ Գաբրիել դ'Արբույն, պրոֆ. Ալբերտ Չանկան (Իտալիա), Ա. Սուրենը (ՍՍՌՄ), Էծենի Կոտտոնը (Ֆրանսիա): Նիստում հանդես եկան նաև Գ. Ռոգենկիլսարը (Նորվեգիա), Դայունը Ալբերտ Չանկան (Իտալիա), Ա. Սուրենը (ՍՍՌՄ), Էծենի Կոտտոնը (Ֆրանսիա): Նիստում հանդես եկան նաև Գ. Ռոգենկիլսարը (Նորվեգիա), Դայունը Ալբերտ Չանկան (Իտալիա), Ջեյմս Էնդիկոտը (Կանադա), պրոֆ. Ֆելիքս Խերցենը (Ֆինլանդիա), Յառաջական Խաղաղության համար (Ֆրանսիա):

Երեկոյան նիստում հանդես եկան Ֆորկհամմերը (Դանիա), Մալտերը (Ֆրանսիա), Գեորգի Նազարենը (Բուլղարիա), Ֆիկինսը (Անգիա), Ինդրովալ Յագնիկը (Հնդկաստան), Աննա Զեգերը (ԳԴՀ):

Նոյեմբերի 26-ի առավոտյան նիստում հանդես եկան Թեոդոր Հարբիսը (Անգիա), Սալազար Սանտոսը (Կոլումբիա), Ժան Էրուլը (Կամիրում), Մարիա Լամասը (Պորտուգալիա), Դանիիլ-Մուրունը (Մոնղոլիա), Ֆերդինանդ Բերենը (Արգենտինա), Կուտուզովը (Ռուսաստան), Խելլը (Ֆինլանդիա), Վալերի Վալենտինովը (Արգենտինա), Խելլը (Ֆինլանդիա), Կուտուզովը (Ռուսաստան): Նիստում հանդես եկան նաև Խալդը (Կամիրում), Վալերի Վալենտինովը (Արգենտինա), Խելլը (Ֆինլանդիա), Կուտուզովը (Ռուսաստան):

Նոյեմբերի 27-ի առավոտյան նիստում հանդես եկան Յարուշակ Կոնուսը (Փուլ-

նալիստների միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար), Զոն լա Ռոզեն (Տրինիդադ և Տոբագո), Լուիս Ասկարապեն (Ուանուողների միջազգային միություն), Անտոնի Տարետը (Լիբանան), Ռեշիսը (Իտալիա), ակադեմիկոս Նեսմեյանը (ՍՍՌՄ): Նիստում հանդես եկան նաև Կոմպոզիտոր Ֆլորիսը (Պարագվայ), Կլաուդիո Տոնելը (Տրինիդադ), էրիքերտոն Խարան (Մեքսիկա), Արդուլլա Մարարը (Իրաք), Կազանին (Պրոֆմիությունների համաշխարհային ֆեդերացիա), Ջով Մազուրը (Իսրայել) և սեսիայի Հյուր Բիրամի Տրաորեն (Ֆրանսիական Սուսան):

Ելույթ տմնեցող բոլոր հոգտորները հայտնում էին իրենց ներկայացրած երկրների միջինավոր ժողովուրդների վճռականությունը խաղաղության պաշտպանության գործում, արտահայտում ժողովուրդների միջև բարի դրացնությամբ, կուլտուրայի և գիտության ասպարեզներում սերտ փոխհարաբերության ցանկություն: Նրանք զայրույթով դատապարտում էին աստղային, ջրածնային, բակտերիոլոգիական և մասսայական ոչնչացման բոլոր գիների գործածությունը և շեշտում, թե գիտության նորանոր հայտնագործությունները պետք է ծառային մարդկության բարօրությանը: Ելույթ տմնեցողները հանգում էին այն եզրակացությամբ, թե պետությունների միջև տարակարծությունների և վիճելի հարցերի կարգադրման լավագույն ուղին պիտի չ հանդիսանա բանակցությունների ուղին և ոչ թե պատերազմը, որի շղթայակերծումը, առկա ավելիոր զենքերի գործածությամբ դեպքում, սպառնում է մարդկության համար անվերականդեմքի գործանում:

Նոյեմբերի 28-ին Պյետրո Նիննիի նախագահությամբ կայացալ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի սեսիայի եղբարփակչի նիստը:

Մարքերի փոփանակությունն ավարտվելուց հետո սեսիան անցնում է համձնաժողովների մշակած բանաձեռների քննարկմանն ու հաստատմանը և Խաղաղության Համաշխարհային Խորհրդի նոր անդամների ու Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի նոր անդամների ընտրություններին:

Կուլտուրայի հարցերի հանձնաժողովի նախագահ է ենթական կուստոնը կարող է այն բանաձևի նախագիծը, որով կոչ է արքում ընդլայնել ժողովուրդների կուլտուրական կազմերը։ Սեսիայի մասնակիցները միաձայն ընդունում են այդ հանձնաժողովի առաջարկած բանաձևը։

Ապա Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի առաջարկով որոշում է ընդունվում 1954 թվականին տարնել համաշխարհային կուլտուրայի հատույալ մեծ ներկայացուցիչների հոգելյանական տարեթվերը։ անդին գրող Ֆիլիդինդի մահվան 200-ամյակը, Ա. Պ. Չեխովի մահվան 50-ամյակը, շեխական կոմպոզիտոր Դվորժակի մահվան 50-ամյակը, Արխտովֆանի ծննդյան 2.400-ամյակը։

Ամբիոն է բարձրանուամ պրոֆ. Ռոզենկվիստը (Նորվեգիա), որը հասպարակում է սեսիային մասնակցող գիտնականների դիմումը աշխարհի բոլոր գիտնականներին, որով կոչ է արքում հանդես գալ մասսայական տշնչացման զենքի արգելման օգտին։

Սեսիայի մասնակիցները միաձայն հաստատեցին Խաղաղության միջազգակիցն մըրցանակների ժուրնալի կուրտիքի նոր անդամների ցուցակը, որ առաջարկեց գրող Ժորժի Ամադու:

Այսուհետև Խաղաղության Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար Ժան Լաֆֆիտը առաջարկում է ընտրել Խաղաղության Համաշխարհային Խորհրդի մի շարք նոր անդամներ և Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի նոր անդամ-

ներ։ Սեսիան միաձայն հաստատում է առաջարկված թեկնածությունները։

Սեսիայի մասնակիցները մեծ ոգևորությամբ ընդունում են «Ընդհանուր բանաձև», որով աշխարհի ժողովուրդներին կոչ է արքում ուժիղացնել պայքարը ամբողջ աշխարհի խաղաղության համար, և «Խաղաղության Համաշխարհային Խորհրդի ուղերձը այն կազմակերպություններին ու գործիչներին, որոնք ցանկանում են միջազգային լարվածության մեջմացում»։

Սեսիայի մասնակիցներին եղբափակիչ խոսքով դիմեց Խաղաղության Համաշխարհային Խորհրդի վիցե-պրեզիդենտ Պյետր Նենին։ Նա հաղորդեց, որ սեսիայի աշխատանքին մասնակցել է 59 երկրներ ներկայացնող 314 դելեգատուն։ Քննեարկվել են Եվրոպային, Ասիային, Հյուսիսային և Լատինական Ամերիկային, Աֆրիկային ու Ավստրալիային վիճակութեարուղ զանազան պրոբլեմներ։ Այդ պրոբլեմների քննարկումը հանգեցրել է ընդհանուր պահանջման՝ հաստատել խաղաղություն։ Ներկայումս, հայտարարեց նենին, ումեն ինչ կախված է մասսաների ուժից և գիտականությունից, խաղաղության պաշտպանության շարժման ընդլայնումից։

Բոլոր ներկա զանալուների քուն, երկարժամանակ շլուղ ծափահարությունների տակ Պյետրուն նենինին Խաղաղության Համաշխարհային Խորհրդի սեսիան հայտարարում է փակված։

(Քաղված ՏՍՍՍ-ի հաղորդագրություններից, «Ընկեցնական ՀԱՅԱՍՏԱՆ», |նոյեմբերի 25, 26, 27, 28, 29 և դեկտեմբերի 1, 1953 թ.)

ԽՍՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՈՒՅԹԻ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԳՐԱՎԱՐ

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բուրգական սեսիայի կողմից բանակցությունների օգտին ընդունված դիմումը գուալ չերմ արձագանք և արժանացավ ամենալայն պաշտպանության։ Ծնորհիվ այդ կամպանիայի, բոլորի համար ընդունելի համաձայնությունների միջոցով միջազգային տարածայնությունները կարգավորելու գաղափարը

օրեցօր գառնում է ավելի ու ավելի մասսայական և տակա իր պառակները։

Կորհայում պատահարազմական գործողությունների դադարեցումը հանդիսացավ խաղաղության գործի հաղթանակը։

Ինչ վերաբերում է Գերմանիային, ապա մեծ տերությունների միջն նոտաների վերջին փոխանակությունը ապացուցում է, որ չորս

մեծ տերությունների կոնֆերենցիայի հրավիրումը հնարավոր է կարճ ժամկետում:

Ինչ վերաբերում է Հնդկաշնին, ապա պատերազմական գործողությունների դադարեցման և խաղաղ կարգավորման գաղափարը նվաճում է հասարակական կարծիքի ավելի լայն խավերին, ինչպես Ֆրանսիայում, անյափես էլ Վյետնամում:

Թայյա միջազգային լարվածության մեղմացմանը դիմադրող ուժերը «բանակցություններ» բառն օգտագործում են սառը պատերազմի երկարաձգման նպատակ ունեցող գործողությունների քողարկման համար: Իրենց խոսակցին կանգնեցնել կատարված փաստերի առջև, — դա չի նշանակում բանակցությունների ձգտում: Ճգնել ստեղծելու բանակցությունների վիճեցման պայմաններ՝ չի նշանակում ցանկանալ բանակցություններ:

Ինչպես Ասիայում, այնպես էլ Եվրոպայում որոշ շրջաններում տիրող իրադրությունը և որոշ կոնֆլիկտներ իրենցից ներկայացնում են սպառնալիք խաղաղության գործի համար:

Կորեայում վարվող բանակցությունները սպառնալիքի տակ են: Այն ձգտում է, որպեսզի չեղոք երկրները և մասնավորապես ՀՀնդկաստանը, բացառվեն քաղաքական կոնֆերենցիայի կազմից, որը գլխավորապես շոշափում է Ասիայի շահերը, կարող է վիճեցնել բանակցությունները: Ժողովուրդները թույլ չեն տա Կորեայում պատերազմական գործողությունների վերսկսում:

Եվրոպայի անվտանգության շահերը պահանջում են շուռափույթ կերպով կարգավորել գերմանական պրոբլեմը: Այդպիսի կարգավորում հնարավոր է միայն չորս տերությունների՝ ԱՄՆ-ի, ՍՍՌ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի համաձայնության միջոցով: Այդպիսի համաձայնության հանապարհին եղած միակ խոշնուուր կողմերից մեկի ձգտումն է՝ վերականգնել գերմանական միլիտարիզմը և Գերմանիան մտցնել մյուս կողմի գեմուղղված ռազմական կուղիցիայի մեջ:

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը Եվրոպայի ժողովուրդներին կոչ է անում խոշնուուր հարուցել «Եվրոպական բանակը վերաբերյալ պայմանագրերի վավերացմանը

և գերմանական միլիտարիզմի վերականգնումը՝ ինչ ձևով էլ դա լինի: Դրանով իսկ ուղի կրացվի գերմանական հարցի շուրջը չորս տերությունների համաձայնության համար, որը գերմանական ժողովրդին կապահովվի խաղաղ ապագայի հեռանկար և նվազուայի բոլոր ժողովուրդներին երաշխիք կտա Գերմանիայում ագրեսիվ ուժերի վերականգնման դեմ:

Ֆրանսիայի և Վյետնամի միջև արդեն յոթ տարի է, ինչ պատերազմը է մշկում: Այդ պատերազմին կարող են վերջ տալ միայն պատերազմող կողմերի ուղղակի բանակցությունները: Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը ողջունում է այն առաջարկը, որ այդ իմաստով մտցրել է Վյետնամի Դեմոկրատական Ռեսպուբլիկայի գելեգացիան և որը պաշտպանել է Զինական ժողովրդական Ռեսպուբլիկայի գելեգացիան: Այդ առաջարկը, որին ֆրանսիական դելեգացիան բարենպատ պատասխան է տվել, կարող է հիմք հանդիսանալ կարգավորման համար:

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը միշտ պնդել է, որ օտարերկրյա ռազմական օկուպացիան, ուրիշի տերիտորիայում ռազմական բազաների շինարարությունը իրենցից ներկայացնում են սպառնալիք միաժամանակ ժողովուրդների անկախության և խաղաղության գործի համար:

Այդպիսի քաղաքականության տարածումը նկատվում է Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, Լատինական Ամերիկայում, Աֆրիկայում: Դա հատկապես դրամուրգիամ է Եվրոպայում, որտեղ փորձեր են կատարվում ստեղծելու «Եվրոպական պաշտպանական միավորում» և ամերիկյան ատոմային բազաներ են ստեղծվում Խաղանիայում: Ասիայում, որտեղ իրականացվում է օտարերկրյա օկուպացիա, ուժեղանում է Յապոնիայի վերադիմումը և որտեղ ԱՄՆ-ը համառորեն աշխատում է ռազմական բազաներ ստեղծել Պակիստանում: Այդ վերջին փորձը սպառնում է պատերազմի պահուղը տարածել երկրագնդի և մեկ շրջանի հարյուր միլիոնավոր մարդկանց մեջ:

Սպառնականությունների հարաճուն մրցավագքը և մասսայական ոչնչացման գենքի արտադրությունը իրենցից ներկայացնում

և անտանելի բեռ և սոսկալի սպառնալիք ամբողջ աշխարհի համար:

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը Ստովհովմի Կոչի տակ ստորագրություններ հավաքելու իր կամպանիայի ընթացքում և Վարչակայի կոնգրեսի որոշման մեջ ամբողջ աշխարհի ուշադրությունը գրավեց դեպի այդ պրորեմը: Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը ափսոսանք է հայտնում, որ ՄԱԿ-ը դեռևս համաձայնության չի հասել այդ հարցերի շուրջը, և ցանկություն է հայտնում, որ շարունակվեն ջանքերը ատոմային ու բակտերիոլոգիական զենքը անպայման արգելելու և սպառազինությունների բոլոր տեսակներն զգալիորեն կրծատելու նպատակով՝ հաստատելով իսկական վերահսկողություն:

Վերջապես, Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը հիշեցնում է, որ եթե անհրաժեշտ է, որպեսզի բանակցություններ սկսվեն բոլոր առանձին հարցերի շուրջը, այնուամենանիվ ինքը միշտ համարել և համարում է, որ միջազգային լարվածության մեղմացման առավել էֆեկտիվ միջոց մնում է հինգ մեծ տերությունների կոնֆերենցիան:

Այդ կոնֆերենցիան որևէ մասնակցի նախաձեռնությամբ կկարողանա քննարկել մեն մի պրորեմ, որը դիտվում է որպես միջազգային լարվածության պատճառներից մեզ, և գոտնել ընդհանուր, բոլորի համար ընդունելի համաձայնություններ:

Միջազգային գործերի կարգավորման միջազգային հաստատություններում Զինական ժողովրդական Ռեսպուբլիկայի օրինական տեղը ճանաշելուց համառորեն հրաժարվելը

խոշոշնություն է հինգ մեծ տերությունների կոնֆերենցիայի հրավիրման համար:

Այդ հրաժարականը, որ հակասում է բոլոր պետությունների շահերին, ավելի ու ավելի խստորեն է դատապարտվում համաշխարհային հասարակական կարծիքի կողմից:

Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրությունը ժողովուրդների տրամադրության տակ դնում է մի այնպիսի գործիք, որը հնարավորություն է տալիս հաստատելու կայուն խաղաղություն: Ժողովուրդները պետք է հասնեն Կանոնադրության պահպանմանը: Կանոնադրության դեմ կատարվող ուսնագործությունները ամբողջ աշխարհը կանգնեցրել են մեծ դժվարությունների առջև: Կանոնադրության տառին և ոգուն վերադառնալը ժողովուրդներին կօգնի ապահովելու իրենց անվտանգությունն ու անկախությունը և հնարավորություն է ստեղծելու ազգերի իսկական համագործակցության համար՝ նրանց տնտեսական ուսուցաների, բարեկեցության և կուլտուրայի զարգացման նպատակով:

Տագնապը և երկյուղը, աղքատությունն ու կարիքը, որոնք սարը պատերազմի և սպառազինությունների մրցավազքի հետևանքով որպես ծանր բեռ ընկնում են մարդկանց ուսերին, կարող են և պետք է վերացվեն ժողովուրդների պայքարի միջոցով, որից վերջին հաշվով կախված է խաղաղության բախումը:

(ՏԱՐԱ)

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 1 դեկտեմբերի 1953 թ.)

